## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

## ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **26 հունվարի 2026թ.**

2026թ. հունվարի 14-ից 26-ը, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ դիզելային շարժիչի ինժեկտորի նորոգման ծառայության ձեռքբերման թիվ ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Խ. Մալոյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շահագործման բաժնի պետ, |
| Ա. Գալստյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ նիստին էլ մասնակցել են չորս անդամները, բացակայում էր «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ավագ հաշվապահ, գլխավոր հաշվապահի պ/կ՝ Ս. Ավագյանը, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակներում «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման արդյունքների մասին:
2. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
4. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունվարի 14-ին ժամը 18:00-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ Կարգի 67-րդ կետի կիրառմամբ պարզվել է, որ «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նշված ընկերությունում բացակայում են ախտորոշման (դիագնոստիկ) և վերանորոգման սարքեր, ինժեկտորների և համակարգի թեստային ստենդներ (օրինակ՝ Bosch CR819, Dimed Exist կամ բարձր ճշտության համարժեք փոխարինողներ), էլեկտրոնային ինժեկտոր թեստեր, ապամոնտաժման և հավաքելու գործիքներ, չափաբաշխման համար նախատեսված հատուկ բարձր ճշտության տափօղակներ և գլաններ, անհրաժեշտ պահեստամասեր և սպառվող ապրանքներ, վերանորոգման հավաքածուներ, որոնք ներառում են ռետինե ներդիրներ, փականների նստատեղեր, բալիցներ, ասեղներ և փոխարինման ենթակա այլ մասեր, ինչպես սպասարկման հատուկ հավաքածուներ և ծրագրային ապահովումներ: Այսինքն, հրավերի պահանջներին համապատասխանելու համար մասնակիցն առնվազն պետք է ունենա վերը նշված սարքավորումները, որպեսզի կարողանա պատշաճ և որակով ծառայություններ մատուցել, բացի այդ պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցների կողմից ուսումնասիրություններ կատարելու ընթացքում «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի տնօրենի բանավոր հայտարարությունից պարզվել է, որ իրենց կողմից ներկայացված Շիրակի 300 հասցեում՝ նշված ծառայություններից որևիցէ մեկը չի իրականացվում, մատնանշվել է Լենինգրադյան հասցեում գտնվող ինչ որ մի տեխսպասարկման կետ, որտեղ որ իրականացվում են նշված ծառայությունները և եթե լինի անհրաժեշտություն կարող են սարքավորումները տեղափոխել հետագայում իրենց կողմից նշված Շիրակի 300 հասցե, այն դեպքում, երբ Ընթացակարգի հրավերով սահմնված է եղել, որ մատուցվող ծառայությունը պետք է իրականացվի Չարբախ հավաքակայանից՝ Շիրակի 9 հասցեից առավելագույնը 4 կմ հեռավորության վրա:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուն ղեկավարվելով գնումների գործընթացը կարգավորող իրավական նորմերի պահանջներով, ինչպես նաև ունենալով հիմնավոր կասկածներ, որ «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն չի համապատասխանում հրապարակված հրավերի պահանջներին, ստուգել է վերջինիս կողմից ներկայացված տվյալների իսկությունը և պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչների ուսումնասիրությունների արդյունքում էլ պարզվել է, որ առկա են բազմաթիվ խախտումներ և անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ մասնակիցն առնվազն պետք է ապահովեր վերը նշված պայմանները, սակայն չի ապահովել և դրանով պայմանավորված առկա է վերջինիս կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու հիմք:

Ավելին՝ «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել Պատվիրատուի կողմից պահանջվող տվյալ տարածքի սեփականության կամ վարձակալության վերաբերյալ հավաստող հիմնավոր փաստաթղթեր, որոնց համաձայն Ընթացակարգի շրջանակներում ծառայությունը մատուցվելու է «Շիրակի 300» հասցեում, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված գրությունում նշված է, որ «կողմերի համաձայնությամբ այդ փաստաթուղթը գաղտնի է» և «դեռ մյուս կողմի համաձայնությունը չկա»: Նման պայմաններում Հանձնաժողովն գալիս է այն հետևության, որ առկա են «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու բոլոր փաստական և իրավական հիմքերը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենին՝ սահմանված կարգով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-2-րդ | «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | անբավարար |
| 1-2-րդ | «Գևորգ Սարգսյան» ԱՁ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Գևորգ Սարգսյան» ԱՁ | X | 13,500,000.00 |
| 2-րդ | «Գևորգ Սարգսյան» ԱՁ | X | 20,800,000.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց, որ Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակից հայտարարել սույն արձանագրության 1-ին կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովին ներկայացրեց Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարության/ների տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված Մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթրոսյան

Խ. Մալոյան

Ա. Գալստյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան